

**« ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԽԹԱՆՄԱՆ ՀՆԱՐԱԿՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵԱՏՍ  
ԱՆԴԱՄԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

**Տիգրան ԱՅՎԱԶՅԱՆ**

ՀՊՏՀ Միջ. տնտ. հար. ամբիոնի հայցորդ

Բանալի բառեր. արտահանում, արտահանման խթանում, արտահանման բազմատեսականացում, արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռ, ԵԱՏՍ

Անկախացման տարիներից սկսած ՀՀ տնտեսության կարևորագույն և մշտապես արդիական խնդիրներից են արտահանման խթանումը, բազմատեսականացումը և արտաքին առևտրի բացասական հաշվեկշռի կրճատումը: Հարկ է նշել, որ այս խնդիրները միշտ եղել են ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում, սակայն այդպես էլ արդյունավետ լուծում չեն ստացել: Մասնավորապես՝ Հայաստանը վերջին տարիներին աննշան մասնակցություն է ունեցել միջազգային առևտրին, արտահանումը չի աճել տընտեսական աճին զուգընթաց, ներմուծումն արտահանման համեմատ ունեցել է աճի առաջանցիկ տեմպեր, ՀՀ արտաքին առևտրային հաշվեկշռի բացասական հաշվեմնացորդը պարբերաբար մեծացել է, ինչը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության՝ գլոբալ շուկայում ցածր գրավչությամբ, տրանսպորտային հաղորդակցման խնդիրներով, տնտեսության փոքր ծավալով, արտահանման խթանման ծրագրերի ոչ բավարար արդյունավետությամբ և այլ պատճառներով: Միաժամանակ, ՀՀ անդամակցությունը միջազգային կառույցներին և ինտեգրացիոն խմբավորումներին մեծապես սահմանափակում է ինքնուրույն արտահանման խթանման քաղաքականություն իրականացնելու՝ երկրի հնարավորությունները:

2014թ. հոկտեմբերի 10-ին Հայաստանը, պայմանագիր կնքելով Բելառուսի, Ղազախստանի և Ռուսաստանի հետ, միացավ Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ ԵԱՏՍ) հիմնադիր պայմանագրին և մինչ այդ ձևավորված իրավապայմանագրային բազային: Այսպիսով, 2015թ. հունվարի 1-ից, այն է՝ միության ստեղծման առաջին օրվանից Հայաստանը հայտնըվեց նոր տնտեսական կարգավիճակում. փոփոխվեցին առևտրի պայմանները մի շարք ապրանքների գծով, բարձրացան երրորդ երկրների հետ առևտրում կիրառվող մաքսատուրքերը: Անդամակցության պայմանագիրը նախատեսում է տարբեր բնագավառներում Հայաստանի համար բացառություններ և անցումային դրույթներ: Միաժամանակ, սահմանվում է այն ապրանքների ցանկը, որոնց նկատմամբ 2015-2021թթ. ընթացքում ՀՀ պարտավորվում է իրականացնել մաքսատուրքի դրույթաչափերի մոտարկում ԵԱՏՍ միասնական մաքսային սակագներին: Հատկանշական է, որ նախքան ԵԱՏՍ անդամակցությունը Հայաստանը կիրառում էր ավելի ցածր ներմուծման

մաքսեր, քան իրավունք ունենալով ԱՀԿ-ին անդամակցելուց հետո: Միաժամանակ, Ռուսաստանը վերջերս է միացել ԱՀԿ-ին և ունի ԱՀԿ դրույթների և պայմանների ներքո իր ներմուծման մաքսատուրքերի իջեցման սեփական ծրագիրը: Բացառությունների վերաբերյալ Հայաստանի բանակցությունները հաշվի են առել ՌԴ կանխատեսվող ներմուծման մաքսատուրքերի նվազման միտումը: Այսինքն՝ հաշվի են առնվել ԱՀԿ անդամակցությամբ Ռուսաստանի ստանձնած պարտավորությունների շրջանակներում ապագայում ակնկալվող ներմուծման մաքսատուրքերի փոփոխությունները: ԵԱՏՄ անդամակցության հետևանքով 2015թ. հունվարի 1-ից ՀՀ-ում ներդրվել են նոր միասնական դրույթաչափեր, որոնք տարբերվում են ՀՀ դրույթաչափերից, ինչը կհանգեցնի առևտրային հոսքերի փոփոխության: Առևտրի փոփոխության արդյունքում սոցիալ-տնտեսական հնարավոր հետևանքների քննության համար կարևոր է առանձնացնել երկրների հետևյալ 3 խմբերը.

1. ԵԱՏՄ երկրներ, որոնց միջև կիրառվում է ազատ առևտրի ռեժիմ և միասնական մաքսասակագնային քաղաքականություն,

2. ՀՀ հետ ազատ առևտրի համաձայնագիր ունեցող երկրներ, որոնք փաստացիորեն հայտնվում են երրորդ երկրի կարգավիճակում,

3. Այլ երկրներ կամ երրորդ երկրներ, որոնց նկատմամբ ԵԱՏՄ-ում կիրառվում է միասնական մաքսասակագնային քաղաքականություն:

Այդուհանդերձ, մաքսատուրքի դրույթաչափերի ազատականացման շնորհիվ ՀՀ արտահանման տեսանկյունից այնքան էլ շոշափելի փոփոխություններ չեն լինի, քանի որ Հայաստանը ԵԱՏՄ բոլոր երկրների հետ արդեն իսկ ունի ազատ առևտրի համաձայնագրեր, որոնք առաջարկում էին նույն պայմանները, ինչ ԵԱՏՄ ինտեգրումը:

ԵԱՏՄ-ն, լինելով միասնական տնտեսական համակարգ, սահմանում է ներմուծման միասնական մաքսատուրքեր: Այս տեսանկյունից, կարծես թե, արտահանման համար որևէ նոր խոչընդոտ չի ստեղծվում, սակայն, պղնձի և մոլիբդենի հանքանյութերը վերամշակելուց և արտահանելուց զատ, Հայաստանը նաև մասնագիտացված է ներմուծվող հանքանյութերի վերամշակման և հետագա արտահանման մեջ: Այս պարագայում ԵԱՏՄ սահմանած լրացուցիչ մաքսատուրքերը կարող են խոչընդոտ հանդիսանալ և մեծապես թանկացնել հանքանյութի վերամշակումը ՀՀ-ում:

ԵԱՏՄ շրջանակներում իրականացվող միասնական մաքսային քաղաքականության շրջանակներում հավաքագրված մաքսատուրքերի վերաբաշխման անհրաժեշտություն է առաջացնում, քանի որ միության անդամ դառնալուց հետո տվյալ երկիր ներմուծված ապրանքը համարվում է ներմուծված նաև այլ անդամ երկրների տարածք: 2014թ. մայիսի 29-ին ՀՀ կողմից ԵԱՏՄ-ին միանալու պայմանագրի դրույթներից մեկը սահմանում է

նաև ՀՀ մասնաբաժինն ընդհանուր հավաքագրված մաքսատուրքերի գումարում (այլ կերպ՝ ԵԱՏՄ երկրներ ներմուծված արտադրանքի նկատմամբ կիրառված մաքսատուրքերից ձևավորվող համախառն բյուջեում)՝ 1.13 տոկոսի չափով<sup>1</sup>: Մաքսատուրքերի ընդհանուր բյուջեում ունեցած մասնաբաժինը Հայաստանին թույլ է տալիս ստանալ ավելի շատ մաքսային եկամուտներ, քան կազմել է մեր մաքսատուրքերի ծավալը ԵՏՄ ինտեգրվելուց առաջ: Այս մասնաբաժնի հաշվարկման հիմքում ընկած էր այն մոտեցումը, որ սահմանված չափաքանակը Հայաստանին ապահովեր նույնքան եկամուտ, որքան կստացվեր, եթե մաքսատուրքերի համապատասխան ավելացումից հետո դրանք կիրառվեին առանձին Հայաստանի կողմից:

Մաքսային միությունն ձևավորումը սովորաբար ստեղծում է առևտրի ընդլայնման հնարավորություններ՝ վերացնելով մաքսատուրքերը միության անդամ երկրների սահմաններում, ինչն էլ իր հերթին խթանում է առևտրի ծավալների աճ՝ նվազեցնելով այդ երկրների միջև շրջանառվող ապրանքների գները: Սակայն ԵԱՏՄ շրջանակներում գործող մաքսային միության առանձնահատկությունն այն է, որ դրան անդամակցող երկրները նախքան այդ արդեն ունեցել են ազատ առևտրի գոտի՝ ուստի մեծ մասամբ իրար նկատմամբ չեն կիրառել ներմուծման մաքսատուրքեր: Հետևաբար, առևտրի ընդլայնումն այս դեպքում ավելի շատ պայմանավորված է ոչ սակագնային խոչընդոտների վերացմամբ:

ԵԱՏՄ մաքսային տարածքում գործող ներմուծման սակագները նշանակալիորեն բարձր են ՀՀ-ում գործող սակագներից: ԵԱՏՄ ներմուծման սակագների միջինը կազմում է 7.6%, մինչդեռ ՀՀ նույն ցուցանիշը չի գերազանցում 3.5%-ը: ՀՀ և ԵՏՄ ներմուծման մաքսատուրքերի համեմատական վերլուծությունը ցույց է տվել համընկնում արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 128 դիրքերում, կամ որ նույնն է՝ ամբողջ անվանացանկի 10%-ի դեպքում<sup>2</sup>:

Հայաստանի համեմատ ԵԱՏՄ դրույքաչափերը բոլոր խմբերում շատ ավելի բարձր են: Ամենամեծ տարբերությունը հետևյալ ապրանքային խմբերում է՝ զենք և զինամթերք (26%), թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր (20%), փայտ և փայտյա իրեր (19%), պատրաստի սննդի արտադրանք (19%), կաշի և դրանից իրեր (12.5%):

ՀՀ և ԵԱՏՄ մաքսային սակագների և դրույքաչափերի համեմատումը

<sup>1</sup> «ՀՀ տնտեսության վրա ԵԱՏՄ անդամակցության ազդեցությունների գնահատումը 2015թ. 1 կիսամյակի արդյունքներով», «Ավագ Սոլյուշնս», Երևան, 2016թ., էջ 32

<sup>2</sup> Армения и Таможенный союз: оценка экономического эффекта интеграции – ЦИИ ЕАБР, 2013. С.19

հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ Հայաստանը ստիպված է բարձրացնել պաշտպանության մակարդակը: Մաքսատուրքերի բարձրացումը կհանգեցնի պետական բյուջեի պակասորդի կրճատմանը (իհարկե եթե մաքսատուրքերի նոր դրույքաչափերի կիրառման պայմաններում պահպանվեն ներմուծման նախկին ծավալները), սակայն կարող են խնդիրներ առաջանալ ԱՀԿ շրջանակներում: ՀՀ միջին ներմուծման սակագինը համարվում է ամենացածրներից մեկը ԱՀԿ անդամ երկրների շրջանում: Ըստ ազգերի առավել բարենպաստության (MFN tariff) դրույքաչափի այն կազմում է 2.7% (Մաքսային միության շրջանակներում այդ դրույքաչափը 2013թ. կազմել 7.6%, 2014թ.՝ 6.9%, իսկ 2015թ.՝ 6%): Միջին կշռված սակագինը ՀՀ-ում կազմում է 8.5% (Ռուսաստանում՝ 10%)<sup>3</sup>: Միևնույն ժամանակ, որոշ ոլորտներում, մասնավորապես՝ ծառայությունների ոլորտում առևտրային ռեժիմներն ավելի ազատական են, քան ԱՀԿ շրջանակներում ՀՀ ստանձնած պարտավորությունները:

Միևնույն ժամանակ, որպես ԵԱՏՄ անդամակցության՝ ՀՀ տնտեսության համար ակնհայտ դրական արդյունք, հարկ է առանձնացնել այն չորս կարևոր ապրանքները, որոնց մասով ՌԴ չի կիրառում արտահանման մաքսատուրքեր ԵԱՏՄ անդամ երկրների նկատմամբ: Դրանք են.

1. **Բենզին:** 2014-2015թթ. ընթացքում ՀՀ էապես ավելացրել է բենզինի ներմուծումը ՌԴ-ից՝ այն հասցնելով 67%-ի, մինչդեռ դեռևս 2012թ. Ռուսաստանի մասնաբաժինը ներմուծման մեջ կազմում էր ընդամենը 26%:

2. **Բնական գազ:** Գնային քաղաքականության տեսանկյունից կարևոր նշանակություն ունի ՌԴ-ից ներմուծվող գազի նկատմամբ արտահանման մաքսատուրքի չկիրառումը: Եթե Հայաստանը ԵԱՏՄ անդամ չլիներ, ապա ներկայումս գործող գազի ներմուծման գինը կլիներ 2013թ. գնի մակարդակին՝ շուրջ 280 ԱՄՆ դոլար 1000 խ.մ. համար: Ըստ 2014-2015թթ. միջինացված տվյալների՝ ներմուծման գինը կազմում է շուրջ 210 ԱՄՆ դոլար 1000 խ.մ. դիմաց: Գոյություն ունեցող սպառման ծավալների պայմաններում դա կկազմեր 130 մլն. դոլարի լրացուցիչ ծախս, որը պետք է արտացոլվեր գազի փաստացի սակագներում: Մասնավորապես, եթե հիմք ընդունենք ներմուծման գնի և սպառողի կողմից վճարվող մանրածախ գնի հարաբերակցությունը, ինչպես նաև ֆիքսված պահենք Հայաստանում իրացնող կազմակերպության մարժան՝ մինչև 10 հազ. մ<sup>3</sup> գազ սպառող օգտագործողի համար սակագինը առանց ԱԱՀ կաճեր 26.4 տոկոսով<sup>4</sup>: Ռուսաստանն արդեն հանել է արտահանման մաքսատուրքերը Հայաստան էներգակիրներ, մի

<sup>3</sup> Армения и Таможенный союз: оценка экон. эффекта интеграции, ЦИИ ЕАБР, 2013. С.20

<sup>4</sup> «ՀՀ տնտեսության վրա ԵԱՏՄ անդամակցության ազդեցությունների գնահատումը 2015թ. 1 կիսամյակի արդյունքներով», «Ավագ Սոլյուշնս», Երևան, 2016թ., էջ 30-31

շարք այլ հումքատեսակներ ներկրելու դեպքում: Խոսքը վերաբերում է սահմանին 30%-ով գազի էժանացմանը: Սահմանին 1000մ<sup>3</sup> գազի գինը նվազել է 270 ԱՄՆ դոլարից մինչև 189 ԱՄՆ դոլար: Մոտ 30%-ով էժանանալու են նաև նավթամթերքերը<sup>5</sup>:

3. **Հացահատիկ:** Հացահատիկը (ցորենը) մեծամասամբ ներմուծվել է ՌԴ-ից դեռևս նախքան Հայաստանի անդամակցությունը ԵԱՏՄ-ին, ուստի այս մասով որևիցե ներմուծման վերակողմնորոշում չէր ակնկալվում: Սակայն այստեղ կարևոր է ընդգծել, որ 2015թ. փետրվարին ՌԴ սկսեց կիրառել արտահանման տուրք 15 տոկոսի չափով, բայց ոչ պակաս, քան 35 եվրո 1 տոննայի համար: Դրա գործողությունը պլանավորված էր մինչև 2015թ. կեսը: Եթե Հայաստանը ԵԱՏՄ անդամ չհանդիսանար և կարճ ժամանակում չգտներ այլ աղբյուրներ, ապա տարվա կտրվածքով դա կավելացներ ներմուծված ցորենի գինը 7.5 տոկոսով<sup>6</sup>:

4. **Ադամանդներ:** Երեք հիմնական ապրանքային խմբերից մեկը, որի համար ԵԱՏՄ անդամակցությամբ պայմանավորված ՌԴ չի կիրառում արտահանման մաքսատուրք (ադամանդի արտահանման նկատմամբ ՌԴ-ում գործում 6.5% մաքսատուրք), ադամանդն է: Ակնկալվում է, որ ԵԱՏՄ-ին անդամակցելու արդյունքում ՀՀ-ում կդրսևորվի ներմուծման վերակողմնորոշում դեպի ռուսական ադամանդը: Նման պայմաններում ակնկալվում է ՀՀ-ում ռուսական հումքի հիման վրա ադամանդի վերամշակման գործընթացի ակտիվացում: ԵԱՏՄ անդամ երկրների միջև առևտրի ապրանքային կառուցվածքն ունի հումքային ուղղվածություն և մոտավորապես համապատասխանում է զարգացող երկրների շրջանակներում գործող տարածաշրջանային ինտեգրացիոն խմբավորումների ապրանքաշրջանառության կառուցվածքին, ինչը նվազեցնում է ԵԱՏՄ անդամների տնտեսությունների փոխլրացման մակարդակը, նվազեցնում է միմյանց նկատմամբ տնտեսական հետաքրքրությունը, երբեմն դարձնում հակառակորդներ՝ նույն ապրանքային շուկայում: ԵԱՏՄ երկրների ապրանքաշրջանառության կառուցվածքային հիմնախնդիրները դրանց տեխնիկատնտեսական զարգացման ոչ բարձր մակարդակի հետևանքն են, ինչն էլ հանգեցնում է այդ երկրների մրցունակության մակարդակի նվազմանը համաշխարհային շուկայում: Այդ են վկայում նաև համաշխարհային մրցունակության զեկույցի տվյալները: Այսպես, ԵԱՏՄ երկրները 2014-2015թթ. զլոբալ մրցունակության համաթվով զբաղեցնում են 63-րդ տեղը, ինչն ավելի բարձր է, քան համաշխարհային

<sup>5</sup> Թավադյան Ա., Ինտեգրացիոն գործընթացների իրական հնարավորությունները // «21-րդ դար» թիվ 5(57), Նորավանք հրատ., 2014, էջ 16

<sup>6</sup> «ՀՀ տնտեսության վրա ԵԱՏՄ անդամակցության ազդեցությունների գնահատումը 2015թ. 1 կիսամյակի արդյունքներով», «Ավագ Սոլյուշնս», Երևան, 2016թ., էջ 31

միջին ցուցանիշը՝ 72, քանի որ վարկանիշային աղյուսակում գնահատված են 144 երկրներ<sup>7</sup>:

Ի հակադրումն կանխատեսումների՝ ԵԱՏՄ-ին անդամակցությամբ ՀՀ արտահանման ծավալները դեպի անդամ երկրներ դրական արդյունքներ չբերեցին: Ավելին՝ սպասված աճը փոխարինվեց արտահանման անկմամբ: Ընդ որում, երբ համեմատվում են արտահանման արժեքային և ֆիզիկական ծավալները, ակնհայտ է դառնում, որ ֆիզիկական ծավալներով արտահանումն ավելի քիչ է նվազել արտահանման ցուցանիշի դոլարային արտահայտության համեմատ: Այսինքն՝ արտահանումից ստացվող եկամուտը զգալիորեն պակասել է, թերևս՝ ռուբլու արժեզրկման պատճառով: Ի լրումն, թանկ էներգակիրները բարձրացնում են տեղական արտադրանքի ինքնարժեքը ռուսական շուկայում այդ ապրանքի համար վճարվող գնից, արդյունքում՝ հայկական արտադրողները ստիպված են ապրանքները նախատեսվածից ցածր գնով վաճառել՝ ապահովելով չնչին եկամուտ: Հակառակ դեպքում՝ եթե ապրանքի վրա թանկ գին սահմանվի, այն կկորցնի իր մրցունակությունը ՌԴ շուկայում և կփոխարինվի այլ երկրի ծագում ունեցող նմանատիպ ապրանքներով: Այսպիսով, ԵԱՏՄ շրջանակներում ՀՀ առևտրային հարաբերությունների խթանման համար կարևորում ենք հետևյալը.

- Պետական ակտիվ քաղաքականություն՝ ուղղված հայկական արտադրանքի և Հայաստանի արտադրողների ճանաչմանը ԵԱՏՄ շուկայում,
- հայկական ծագման արտադրանքի գովազդում հիմնական և հնարավոր առևտրային գործընկեր երկրներում,
- պետական նպատակադրված քաղաքականություն որդեգրում՝ ուղղված արտադրանքի որակի բարձրացմանը՝ միջազգային և ԵԱՏՄ չափորոշիչներին համապատասխանեցման ճանապարհով,
- բարեփոխումներ մաքսային և հարկային համակարգերում,
- ՕՈՒՆ-ների ներգրավմանն ուղղված ակտիվ քաղաքականություն,
- հիմնական առևտրային գործընկեր՝ ԵՄ և ԵԱՏՄ շուկաների մասին տեղեկատվության մատչելիության բարձրացում,
- առևտրային և մաքսային ընթացակարգերի պարզեցում,
- մրցակցության ապահովում բեռնափոխադրման ոլորտում:

Վերոնշյալ միջոցառումների համալիր իրագործումը կնպաստի ՀՀ արտահանման հնարավորությունների ընդլայնմանը, տնտեսական միջավայրի կարգավորմանը և ԵԱՏՄ անդամ երկրների հետ տնտեսական համագործակցության և ինտեգրման խորացմանը:

<sup>7</sup> The Global Competitiveness Report 2014-2015, World Economic Forum 2014, p. 104-391

### **Տիգրան ԱՅՎԱԶՅԱՆ**

#### **ՀՀ արտահանման խթանման հնարավորությունները ԵԱՏՄ անդամակցության համատեքստում**

*Բանալի բառեր.* արտահանում, արտահանման խթանում, արտահանման բազմատեսականացում, արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռ, ԵԱՏՄ

Արտահանման խթանումը, արտահանման բազմատեսականացումը և արտաքին առևտրի բացասական հաշվեկշռի կրճատումը ՀՀ տնտեսության կարևորագույն և մշտապես արդիական խնդիրներից են: Սակայն, ՀՀ անդամակցությունը միջազգային կառույցներին (ԱՀԿ) և ինտեգրացիոն խմբավորումներին (ԵԱՏՄ) մեծապես սահմանափակում է ինքնուրույն արտահանման խթանման քաղաքականություն իրականացնելու՝ երկրի հնարավորությունները: Կանխատեսումներին հակառակ՝ ԵԱՏՄ-ին անդամակցությամբ ՀՀ արտահանման ծավալները դեպի անդամ երկրներ դրական փոփոխություններ չարձանագրեցին: Թերևս, պատճառն այն է, որ ԵԱՏՄ-ին անդամակցող երկրները նախքան այդ արդեն ունեցել են ազատ առևտրի գոտի, ուստի մեծամասամբ իրար նկատմամբ չեն կիրառել ներմուծման մաքսատուրքեր:

### **Тигран АЙВАЗЯН**

#### **Возможности стимулирования экспорта РА в контексте членства ЕАЭС**

*Ключевые слова:* экспорт, стимулирование экспорта, диверсификация экспорта, отрицательное сальдо внешней торговли, Евразийский экономический союз

Стимулирование экспорта, снижение отрицательного сальдо внешней торговли и диверсификация экспорта являются важнейшими и всегда актуальными проблемами экономики РА. Тем не менее, членство в международных организациях (ВТО) и интеграционных группировках (Евразийский экономический союз) значительно ограничивает возможности страны осуществлять собственную политику стимулирования экспорта. Вопреки прогнозам, присоединением к Евразийскому экономическому союзу не наблюдалось позитивных изменений в объемах экспорта Республики Армения в страны-члены ЕАЭС.

### **Tigran AYVAZYAN**

#### **Export promotion possibilities of RA in the context of EAEU membership**

*Key words:* export, export promotion, export diversification, negative balance of foreign trade, Eurasian Economic Union, unified customs tariff

Export promotion, reduction of the negative balance of foreign trade and export diversification are essential and always current problems of the RA economy. However, membership in international organizations (WTO) and integration groupings (EAEU) significantly limits the ability of the country to implement its own export promotion policy. Contrary to forecasts, the accession to the Eurasian Economic Union didn't made any positive change in the exports volumes of the Republic of Armenia to the EAEU member states.